

աշխատութեան մէջ լուսանցքի տակ կ'աւելցընէ .

«Հայերը ստիպուեցան առեւտուրը (մետաքսի) լքել 1745-ին, բրիտանացիներէն չորս տարի առաջ»:

Ասիկա սակայն ճիշդ չէր, ինչպէս որ քիչ յետոյ պիտի տեսնենք:

* * *

ԺՂ. դարուն կէսերուն անդլիացիներէն աւելի տեղական անհանդարտ պայմաններն էին, որ կը նեղէին հայ վաճառականները: 1743-ի ապստամբութեան առն աւերուեցաւ եւ կողոպտուեցաւ Շիրվանը, մասնաւորաբար Շամախին, ուր 15,000 մարդ սպանուեցաւ: «Նախապէս բազմաթիւ վաճառականներ կ'ապրէին հոս, մասնաւորաբար հնդիկներ եւ հայեր, քանի մը թաթարներու հետ: Ասոնք մինակ հում մետաքս՝ 25 պաթմանոց 400 հակ կ'արտածէին: Բայց հիմա (1747ին) վաճառականական հետքեր հազիւ կ'երեւան»:1)

Պարսկաստան զրկուած ուսս դեսպանութեան օրագրէն առնուած այս վկայութիւնը ինքնին պերճախօս է կացութեան մասին:

Հում մետաքսի առեւտուրին մէջ Հայ վաճառականներու արեւը մայրը կը մանար: «Տարիներէ ի վեր հայերը իրապէս իրենց առեւտուրը տարածած էին մինչեւ Պարսկաստանի հիւսիսակողմը, ուսերու հասողութենէն շատ աւելի հեռուն: Հոլանտայի մէջ ունեցած իրենց վարկին միացնելով իրենց սեփական գրամապլուխը՝ անոնք առեւտուրի այս ճիւղին մէջ սպառեցին 100,000 փառնտ: Սակայն, այս մթերքը այսօր զիրենք չի կրնար տանիլ: Գիւլանի շուկային ծայրայեղ կլանումը, ինչպէս նաեւ պարսիկ կառավարութեան ահռելի կեղեքումները դադրեցուցին իրենց առեւտուրի շրջանը՝ կորսնցնել տալով Հոլանտայի մէջ անոնց ունեցած վարկը: Հուսկ անոնք ստիպուեցան հեռանալ Պարսկաստանէն եւ 1745-ին Ասդրախան քաշուեցան՝ իրենց ստացուածքին

սպասելով, մինչեւ որ լաւ առիթ մը զիրենք դարձեալ հոն վերադարձնէ:

«Անդին Ռուսական Ընկերութիւնը, որ ապահով էր, չէր կրնար անդալ մնալ ուղղակի Գիւլանի զիւղացիներէն հում մետաքս գնելու շահին հանդէպ: Սակայն, առաւելութիւնները կրնան ծայրայեղօրէն գնահատուիլ՝ դադրելով իրապէս առաւելութիւն ըլլալէ, մանաւանդ երբ կը զործածուին վրդովմունքով եւ անյարմարութեամբ, որոնց նմանին փորձառու եղան կասպեան (Անդլիացի) վաճառականները: Անգոսնելի նկատողութիւն մը չէ, որ հայոց պէս ստորին ժողովուրդ մը, զուրկ Ռուսիոյ մէջ բրիտանական ազգին դէմ մըրցակցելու կարողութենէն, օժանդակուած ու պաշտպանուած էր այս առեւտուրին մէջ, եւ ակնյայտնի կերպով միջոցներ կը գործադրուէին զայն (առեւտուրը) մեր ձեռքէն խլելու: Արդարեւ, ուսերը հաստատեցին, որ այս հայերէն շատերը իրենց երկրի հպատակներ էին: Եւ ընդհանրապէս ճիշդ է, որ անոնցմէ անոնք, որ կասպեան առեւտուրով կը զբաղէին, ինքզինքնին ուսս կայսրութեան պաշտպանութեան տակ կը դնէին: Նոյն առն այս ժողովուրդը կը թուած է Ասիական ամէն ծառայութեանց մէջ: Անոնք զիտեն ինքզինքնին թշնամանքներու յարմարցնելու կերպը, որուն դժուար թէ եթարկուի ազատ ազգի մը կամքը: Հայերը զանազան աստիճաններով աւելի յարմար են օտար պետութեանց մէջ առեւտուր ընելու:

«Ռուսիոյ ընկերութեան առեւտուրի այս ճիւղին մէջ ունեցած փայլը չհասաւ հայոց ունեցածի բարձրութեան: Թէ ասիկա ի՞նչ նշանակութիւն ունէր հայոց համար, կարելի է գիւրաւ խտացնել այսպէս: Քանի մը տարի առաջ անոնց հում մետաքսի Ռուսիա ներածումը հազար հակի մօտ էր (իւրաքանչիւր հակ 25 պաթման, որ կ'ըլլայ 300,000 փառնտ, իւրաքանչիւրը 16 աունանոց, մինչ բոլոր բրիտանական առեւտուրը այդ քանակի կէսին իսկ չհասաւ): Ասոր մեծագոյն մասը Ասդրախամ զրկուեցաւ, մաս մը գերմանական շուկաները եւ մօտաւորապէս 100 հակ ալ կը մնար Մոս-

1) British Trade... J. Hanway, էջ 260-61: